

«Հագարանյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի ապրիլի 29-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Նիստին մասնակցում էին հետևյալ Շահառուների խորհրդի անդամները՝

Արթուր Սաքունց	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Արայիկ Հովհաննիսյան	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ
Վեհանուշ Հովհաննիսյան	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ
Կարեն Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Աշոտ Ոսկանյան	«Ագրոգարգացում» ՀԿ
Հրաչիկ Ջավադյան	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամ
Վանիկ Սողոմոնյան	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ
Հակոբ Աբրահամյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ
Սեյրան Մարտիրոսյան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ
Լևոն Բարսեղյան	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՋՕԸ
Վարդան Համբարձումյան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ
Արթուր Բաբաջանյան	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ (Լիլիթ Ավագյանի լիազոր ներկայացուցիչ)

Նիստից բացակայում էին.

Լիլիթ Ավագյան	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ
Վիլիկ Բարսեղյան	«Արարատ» ՋՕԸ
Արամ Մուքիսայան	«Հայաստանի երիտասարդների ազգային խորհուրդ» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Նազելի Վարդանյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, գլխավոր իրավախորհրդատու
Նորա Մարտիրոսյան	Իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար
Նանե Աճեմյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մամլո քարտուղար
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Նաիրա Ալբունյան	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան
Հասմիկ Ասլանյան	«Շողեր միություն» ՀԿ

Լիլիթ Աբրահամյան
Սոնա Այվազյան
Մանյա Սելիքջանյան

Սոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոն
 ՏՁԿ/ԹԻ Հայաստան
 «Լոռե» Էկոակումբ

Նիստին ներկա էին նաև հետևյալ ՁԼՄ ներկայացուցիչները՝

Հերմինե Բաղդասարյան, «Հայլուր»

Գայանե Աբրահամյան, Armenia Now շաբաթաթերթ

Լիանա Եղիազարյան, «Արմենայրես» 1/գ

Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Վեհանուշ Հովհաննիսյանի թեկնածությունը և միաձայն հաստատվեց: Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

N	Սկիզբը	Օրակարգի հարց	Ձեկուցող	Կից փաստաթղթեր
1.	15:00	ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի արդյունքների ներկայացում (ՇԽ նախորդ նիստից առ այսօր ընկած ժամանակահատվածի համար)	<i>Արա Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն</i>	---
2.	15:15	Կառավարման խորհուրդ պատվիրակված ՇԽ անդամների մասնակցության և իրականացրած աշխատանքների համառոտ ներկայացում (ՇԽ նախորդ նիստից առ այսօր տեղի ունեցած ԿԽ նիստերի վերաբերյալ) - Շահառուների խորհրդի անդամ Հրաչիկ Ջավադյանի՝ Կառավարման խորհրդի անդամությունից հրաժարվելու դիմումի ներկայացում	<i>Կառավարման խորհրդի անդամներ ՇԽ անդամ Հրաչիկ Ջավադյան</i>	ԿԽ մարտի 28-ի նիստի արձանագրություն
3.	15:45	Կառավարման խորհրդի անդամի թափուր պաշտոնի համալրում (փակ գաղտնի քվեարկություն)	<i>Նիստի նախագահող</i>	Քվեաթերթիկի օրինակ
4.	16:30	ՀՄԿ Հայաստանյան ծրագրի փոխտնօրեն Մայրոն Հիրնիակի՝ 2008թ. ապրիլի 11-ի նամակի (շահերի բախման վերաբերյալ) քննարկում	<i>Նիստի նախագահող</i>	Նամակի հայերեն տարբերակը
5.	17:00	Այլ հարցեր ա) «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացրած արտագնա հանդիպման արդյունքների ներկայացում, առաջիկա գործողությունների հստակեցում	<i>ՇԽ անդամ Սեյրան Մարտիրոսյան</i>	

Օրակարգի վերաբերյալ հանդես եկավ ՇԽ անդամ Հ. Ջավադյանը և առաջարկեց օրակարգից հանել 4-րդ հարցը այն նպատակով, որ դրա քննարկմանը մասնակցի անձամբ Մայրոն Հիրնիակը և մեկնաբանի իր կողմից առաջ քաշված «շահերի բախման» գաղափարը:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանն առաջարկեց չհետաձգել հարցի քննարկումը և փորձել լուծում տալ բարձրացված հարցին: Նա նշեց նաև, որ ոչ պաշտոնապես հարցն արդեն քննարկվել է հետաքրքրված կողմերի հետ և համապատասխան լուծում է առաջարկվել:

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանն առաջարկեց Մայրոն Հիրնիակի նամակում բարձրացված շահերի բախման հարցին տալ առաջնահերթություն և այն դարձնել օրակարգի առաջին հարց, քանի որ այդ հարցի վերաբերյալ քննարկման արդյունքները կարող են ազդեցություն ունենալ հաջորդող հարցերի լուծմանը: Առաջարկությունը դեմ արտահայտվողներ չեղան:

Օրակարգի վերաբերյալ հանդես եկավ նաև ՇԽ անդամ Ա. Սաքունցը և առաջարկեց որպես առանձին հարց օրակարգում ընդգրկել Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների ներկա իրավիճակը, վերջին զարգացումները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հարցը ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացման նախապայմաններից է: Նա կոչ արեց ՇԽ անդամներին անտարբեր չմնալ այդ հարցի կապակցությամբ և փորձել որևէ կերպ արձագանքել: Ա. Սաքունցի առաջարկությունը պաշտպանեց նաև ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը. նա հիշեցրեց ՇԽ անդամներին, որ նախորդ միստերին կոչ է արել խորհրդի անդամներին հանդես գալ ուղերձով կապված Հայաստանում ժողովրդավարության իրավիճակի և ծրագրի իրականացման ռիսկերի հետ:

Ա. Սաքունցի առաջարկությունը՝ օրակարգում ընդգրկել Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների վիճակի քննարկումը՝ որպես ՀՄՀ-Հայաստանի ծրագրի նախապայման, դրվեց քվեարկության, սակայն մերժվեց 4 կողմ (Լ. Բարսեղյան, Ս. Մարտիրոսյան, Ա. Սաքունց, Կ. Նազարյան), 5 դեմ (Ա. Ոսկանյան, Հ. Ջավադյան, Վ. Սողոմոնյան, Ա. Բաբաջանյան, Տ. Գազարյան) և 4 ձեռնպահ ձայներով (Ա. Հովհաննիսյան, Վ. Հովհաննիսյան, Հ. Աբրահամյան, Վ. Համբարձումյան):

Հանդես եկավ նաև ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը և իր կողմից առանձնացրեց հետևյալ կետերը (կարծիք և առաջարկություն)

1. առաջիկայում նմանատիպ հարցերը համապատասխից չմտցնել օրակարգ, այլ նախապես որոշել, 2. առաջիկա ՇԽ միստերից մեկը մվիրել «Ջրից դեպի շուկա բաղադրիչի» քննարկումներին, 3. ՇԽ առաջիկա միստերից մեկին քննարկել ներկաների և բացակաների հարցը՝ ՇԽ արդյունավետության բարձրացման նպատակով:

ՇԽ անդամ Վ. Համբարձումյանը նշեց, որ ինքը նույնպես կողմ է ՀՄՀ-Հայաստանի ծրագրի քաղաքական նախապայմանների քննարկում անցկացնելուն, սակայն առաջարկում է այդ կապակցությամբ կազմակերպել առանձին միստ:

ՇԽ անդամ Ս. Մարտիրոսյանը հորդորեց ՇԽ անդամներին չձգձգել այն կարևոր հարցերի քննարկումը, որոնք իրապես գտնվում են ՇԽ պարտավորությունների շրջանակներում: Նա առաջարկեց չմերժել Ա. Սաքունցի առաջարկությունը և այդ օրն անցկացնել քննարկում, ինչ վերաբերում է ժամանակի սղությանը, կարելի է միստը շարունակել մեկ ուրիշ օր: Ս. Մարտիրոսյանն իր մտահոգությունը հայտնեց, որ քաղաքացիական հասարակությունը հնարավորություն չի ունեցել ծանոթանալ ՀՀ նախագահի պատասխան նամակին:

ՇԽ անդամ Կ. Նազարյանն արձանագրեց այն փաստը, որ ՇԽ անդամները չեն մերժում այն մտտեցումը, որ այդ հարցը կարևոր է և հրատապ. նա միացավ Վ. Համբարձումյանի՝ առանձին նիստ հրավիրելու առաջարկությանը, առաջարկեց նաև քննարկումներին հրավիրել համապատասխան մասնագետների:

ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանը նույնպես խոսեց հարցի շուրջ և առաջարկեց ՇԽ անդամներին երկրում առկա իրավիճակի հետ կապված քաղաքական քննարկումներն անցկացնել ՀՄՀ-Հայաստան ծրագրի կատարողականի շրջանակներում:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանն առաջարկեց հարցի քննարկումները չհետաձգել, նշանակել օրը և առաջիկա մի քանի օրվա ընթացքում անցկացնել վերոնշյալ քննարկումները՝ ապահովելով բազմակարծությունը և այդ ոլորտի հետ առնչվող մասնագետների մասնակցությունը:

Նիստի նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը և անցնել առաջ (առարկություններ չեղան):

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի արդյունքների ներկայացնելու (մարտի 20-ից հետո ընկած ժամանակահատվածի) նպատակով ձայնը տրվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանին: Նա ներկայեցրեց ներկայացրեց ծրագրի շրջանակներում կնքված հիմնական պայմանագրերը և դրանց գործունեության շրջանակը, մասնավորապես

- «Հայջրնախագիծ Ինստիտուտ» ՓԲԸ-ի խորհրդատվական ծառայություններ մատուցման պայմանագիրը՝ ՀՄՀ-Հայաստանի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում ոռոգման 4 ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով նախագծման եւ շինարարության վերահսկման ուղղությամբ:
- Տնտեսական զարգացման եւ հետազոտությունների կենտրոն (ՏՀԶԿ) հայաստանյան ՀԿ-ի պայմանագիրը՝ ՀՄՀ-Հայաստանին Տվյալների որակի գնահատման (Տեղական ՏՈԳ) ծառայություններ մատուցելու նպատակով:
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ի եւ «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ պայմանագրերը, համաձայն որոնց, նշված ֆինանսական կազմակերպությունները պետք է իրականացնեն ՀՄՀ-Հայաստան ծրագրի վարկային բաղադրիչը եւ վարկեր տրամադրեն գյուղաբնակ շահառուներին՝ գյուղատնտեսական արտադրությունը ընդլայնելու եւ արդյունավետ տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով:

Ներկայացման վերաբերյալ Արա Հովսեփյանը պատասխանեց ՇԽ անդամների հետևյալ հարցերը՝

հարց. Որքա՞ն է ՀՄՀ վարկային ծրագրի տոկոսադրույքների չափսը (ՇԽ անդամ Կ. Նազարյան):

պատասխան. Նվազագույնը՝ 6.5%, իսկ առավելագույնը՝ 11.5%:

հարց. Կա արդյո՞ք քվոտա, թե որ կազմակերպությունը որքա՞ն գումար կարող է բաշխել (ՇԽ անդամ Լ. Բարսեղյան):

պատասխան. Տվյալ պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր վարկային կազմակերպություն մինչև երեք լոտ՝ յուրաքանչյուրը 100.000 ԱՄՆ դոլար արժողությամբ, իսկ բանկերը՝ մինչև հինգ լոտ:

հարց. Ինչպե՞ս են տնօրինվելու դրամական այն միջոցները, որոնք որպես վարկեր վերադարձվելու են վարկառուների կողմից (ՇԽ անդամ Կ. Նագարյան):

պատասխան. Ստույգ մեխանիզմները դեռ հստակեցված չեն, սակայն նախատեսվում է, որ ծրագրի շրջանակներում կնշանակվի լիազոր մարմին տնօրինելու ետ վերադարձված գումարները՝ ծրագրային նպատակների ուղղությամբ:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանն առաջարկեց առանձին հանդիպում կազմակերպել վարկային բաղադրիչն իրականացնող կազմակերպությունների հետ՝ ծրագրի մանրամասները քննարկելու նպատակով:

Վ. Համբարձումյանն առաջարկեց ՊՈԱԿ-ին միջնորդել, որպեսզի ՇԽ անդամներին կանխավ տրամադրվեն նյութեր:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

Չայնը տրվեց ՇԽ անդամ Հ. Ջավադյանին. նա նշեց, որ իր կազմակերպությունը՝ Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամը, որպես կոնցորցիումի մի մաս մասնակցել է Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում իրականացվող «Ռոզգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» ծրագրի մրցույթին և գնահատող հանձնաժողովի կողմից ընտրվել է հաղթող: Նա կարևորեց այն փաստը, որ ՀՄՀ-Հայաստանի միջնորդությամբ չի մասնակցել մրցույթի հետ կապված որևէ քննարկման և քվեարկության: Շուտով, պարզ է դարձել, որ Կառավարման խորհրդում իր անդամակցությունն առաջ է բերում շահեր բախում, այդ պատճառով Հ. Ջավադյանը ՀՄԿ-ին և ԿԽ-ին ներկայացրել է Կառավարման խորհրդից իր լիազորությունների դադարեցման մասին հրաժարական դիմումը, ինչը ՇԽ անդամներին խնդրում է ընդունել ի գիտություն:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը խնդրեց Հ. Ջավադյանին պարզաբանել արդյոք իր կարծիքով կար շահերի բախում ԿԽ-ում և ՇԽ-ում: Հ. Ջավադյանը հայտնեց այն կարծիքը, որ շահերի բախումը կսկսվի պայմանագրի ստորագրումից հետո:

ՇԽ անդամները շնորհավորեցին ՇԽ անդամ Հ. Ջավադյանին և շնորհակալություն հայտնեցին ԿԽ-ում բեղմնավոր աշխատանքի համար:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ (ՀՄԿ Հայաստանյան ծրագրի փոխտնօրեն Մայրոն Հիրնիակի՝ 2008թ. ապրիլի 11-ի նամակի (շահերի բախման վերաբերյալ) քննարկում)

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ արտահայտվեց ՀՄՀ-Հայաստանի ԳԳՏ Ա. Հովսեփյանը: Նա ներկաներին հիշեցրեց ՀՄԿ հայաստանյան ներկայացուցիչ Մայրոն Հիրնիակի կողմից բարձրացրած շահերի բախման վերաբերյալ նամակագրությունը: Նա ներկաներին ասեց, որ քննարկում է ունեցել Մ. Հիրնիակի հետ, ում հետ համաձայնել են խնդրի լուծման ուղղությամբ հետևյալ հիմնական կետերի շուրջ՝

- ԿԽ բոլոր անդամների համար շահերի բախման դեպքերը բացառելու նպատակով յուրաքանչյուր ԿԽ նիստից առաջ անցկացնել հանդիպում ԿԽ հինգ անդամների և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ-ի (կամ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի որևէ ներկայացուցիչի) մասնակցությամբ, քննարկել ներկայացված օրակարգի նախագիծը

և որոշել այն հարցերը, որոնք կարող են հնարավոր շահերի բախման պատճառ հանդիսանալ:

- Առաջիկայում անցկացնել ավելի լայն քննարկումներ ՇԽ կանոնակարգում շահերի բախումը սահմանելու նպատակով:

ՇԽ անդամ Ա. Սաքունցը խնդրեց պարզաբանել, թե ինչից է բխում է Մ. Հիրնիակի պահանջը Ա. Ոսկանյանի՝ ԿԽ-ի նիստերին մասնակցությունը սահմանափակելու մասին: Արա Հովսեփյանը նշեց, որ Մ. Հիրնիակը խոսում է հնարավոր շահերի բախման դեպքերի մասին և ոչ թե կոնկրետ դեպքի մասին:

Հ. Ջավադյանը մտահոգություն հայտնեց այն մասին, որ չկա շահերի բախման հստակ սահմանում և հնարավոր չէ դա հայտնաբերել և հստակեցնել:

ՇԽ անդամ Կ. Նազարյանն առաջարկեց ՇԽ անդամներին ընդունել Ա. Հովսեփյանի կողմից առաջ քաշած հարցի լուծումը, որը կոնկրետ հարցադրմանը կոնկրետ լուծում է առաջարկում: Ա. Հովհաննիսյանը կողմ արտահայտվեց առաջարկվող լուծմանը և կարևորեց այն հանգամանքը, որ նման հանդիպումները հնարավորություն կտան հնարավոր շահերի բախման դեպքերը առաջիկայում նույնպես հայտնաբերել և մեկընդմիջտ լուծել խնդիրը:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը հարց ուղղեց Արա Հովսեփյանին այն մասին, թե արդյոք մրցութային հանձնաժողովների կազմում կարող են ենթակայության կամ ստորադասության կարգով ներգրավվել անդամներ: Արա Հովսեփյանը պատասխանեց, որ ընդունված կարգի համաձայն դա չի թույլատրվում:

Այնուհետև, Լ. Բարսեղյանը կարծիք հայտնեց, որ նախ նամակում ներկայացված սահմանափակումները տեղին չեն, միևնույն ժամանակ իր համոզմունքն այն է, որ պարոն Ոսկանյանի պարագայում կա այն համակարգային շահերի բախումը, ինչը ՀՄՀ-Հայաստան ծրագրում ընդունելի չէ, ինչպես նշեց ՀՄՀ-Հայաստանի տնօրենը:

ՇԽ անդամ Ա. Սաքունցը շարունակեց այն միտքը, որ պարզ չէ, թե ինչու է Մ. Հիրնիակը տեսնում շահերի բախումը, ճիշտ կլինի դա պարզել իրենց: Ա. Ոսկանյանը նշեց, որ իր համար նույնպես հստակ չէ, թե որ դեպքերի մասին է խոսում Մ. Հիրնիակը և ներկայացրեց այն մոտեցումը, որ իր և համապատասխան նախարարի մասնակցությունը ԿԽ նիստերին իր գործողությունները բացառապես չեն կաշկանդում:

Ընդհանուր առմամբ, գրացվեցին երկու առաջարկություններ՝

1. Մ. Հիրնիակին ներկայացնել պատասխան նամակ ՀՄՀ-Հայաստանի ԳԳՏ-ի կողմից առաջ քաշած մոտեցմամբ՝ Կառավարման խորհուրդ պատվիրակված Շահառուների խորհրդի անդամները և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենը կհանդիպեն Կառավարման խորհրդի յուրաքանչյուր նիստից առաջ պարզելու օրակարգի այն հարցերը, որոնք կարող են հնարավոր շահերի բախման պատճառ հանդիսանալ, շահերի բախման դիտարկման այս գործընթացը կկիրառվի Կառավարման խորհրդի բոլոր պատվիրակների համար, ներառյալ Աշոտ Ոսկանյանին (Կ. Նազարյան, Ա. Հովհաննիսյան):
2. Հանդիպել Հ. Հիրնիակի հետ և իր մասնակցությամբ քննարկել հարցը (Ա. Սաքունց, Ա Ոսկանյան):

Քվեարկության դրվեց առաջին տարբերակը և հաստատվեց 10 կողմ և 2 ձեռնպահ ձայներով:

Առաջարկվեց և որոշվեց օրակարգի մյուս երկու հարցերի քննարկումը հետաձգել մինչև մայիսի 6-ը:

Նախագահող՝

Վ. Հովհաննիսյան

Քարտուղար՝

Վ. Գրիգորյան

Ապրիլի 29-ը, 2008